

2017թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 1086 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2017թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 1086 հարկ վճարողների 2017 և 2016 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2017թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1308 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճելով 15.4%:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 61.9 %-ով և կազմել 433.0 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները աճել են 10.3%-ով և կազմել 212.9 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 48.5 մլրդ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմել է 35.5 մլրդ դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 146.5 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2017թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 63.4%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 313 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 110 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 5.7 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2017թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 151.7 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 106.0 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 11.5 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 10.8 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 3.8 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է է 1.7%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը աճել է 3%-ով և կազմել 215 հազար դրամ: